



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

27.01.2012 N-----

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ե Ր Ձ
Բ Ա Ն Ա Կ Ի Օ Ր Վ Ա Կ Ա Պ Ա Կ Ց ՈՒ Թ Յ Ա Մ Բ

Ջերմորեն շնորհավորում եմ Հայկական բանակի կազմավորման 20-ամյա հորեյանի առիթով և բարենադիթում, որ Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերի հաղթական և հաստատուն երթը շարունակաբար նշանավորվի նորովի հաջողություններով:

Բանակը համազգային ձեռքբերում է, համայն հայության դարավոր նպատակների և իդների իրականացման խորհրդանիշը, որը պետք է սրբորեն պահենք ու պահպանենք և ինքնատիպ հայրենասիրության ու հայրենապաշտության պատգամների ներքո փոխանցենք նորորյա սերնդին:

Հայոց բանակը մեր ժողովրդի պատմության ընթացքում իրողություն դարձած բազում հերոսությունների հավաքական ամբողջությունն է և քաջարի հայ մարտիկի, հայ զինվորի ամրակուռ ոգու արտահայտությունը:

Մեր ժողովուրդն ամենայն պատասխանատվությամբ ու անսահման մեծարանքով է տոնում Հայոց բանակի կազմավորման 20-ամյա հորեյանը, որը վերջինիս հանդեպ ունեցած ամենայն երախտագիտության ու գնահատանքի լավագույն դրսևորում է:

Ցանկանում եմ հերթական անգամ շնորհավորել այս կարևորագույն հորեյանի կապակցությամբ, ջերմ բարենադիթանքներ հղել բանակաշինության գործընթացներում իրենց առանցքային մասնակցությունն ունեցած և ունեցող բոլոր նվիրյալներին՝ հավերժ փառքի արժանացնելով այդ նշանակալի գործում հերոսաբար զոհված բոլոր հայորդիների հիշատակը:

Տոնական այս օրվա խորհրդով պետք է մաղթենք, որ տարածաշրջանում ամենամարտունակ բանակի համբավն ու հեղինակությունը մշտապես ուղեկցեն Հայկական բանակին:

Հարգանքներով

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ